

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԵՐԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Ստակոյի և երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Թիֆլիսում. Փօթիկ 2
կարգի վաճառական.

Մ Ո Վ Ս Է Ս Խ Ա Չ Ա Տ Ր Ե Ա Ն Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ա Ն Յ

Հանգուցեալ մայրը՝ Թագուհի Առուշանեան և եղբայրը՝ Գեորգ Խաչատրեան
Յարութիւնեանները, բոլոր՝ Եկատերինէ և Քաչատրեան և փեսան՝ Յովհաննէս Ստեփանեան Նիկողոսեանները ցաւօք սրտով և դառն վշտով
յայտնում են իրանց ծանօթներին և ազգակիցներին, որ յուղարկաւորութիւնը տեղի կու-
նենայ հինգշաբթի, մայիսի 20-ին, առաւօտեան 10 ժամին, սեփական տանից, Լաղարեկա-
կայա փողոց, № 55, դէպի էջմիածնեցոց եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզ-
մանատունը:

Ամբիճը մայիսի 19-ին, չորեքշաբթի երեկոյեան 7 ժամին: (Կ. հ.) 1—2

ԲԱՐՈՒՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Աշխատաւորների օգտին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մաժուր. Պերճ Պաօշեանց, Նամակներ
Մովսէսյայի. Բաղդուի նախարարինաբերողների
XIII ժողովը. Նամակ Ղուբայից. Նամակ Ալեք-
սանդրովից. Նամակ Ներսիսից. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւր-
քիայից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՇԽԱՏԱՐՈՒՆԵՐԻ ՕԳԵՆՈՂԻՆ

Այս տարի լրանում է Գերմանիայում մի
հետաքրքիր յիշատակ: Յիսուս տարի սը-
րանից առաջ Գերմանիայում Շուլցէ տ-
նունով մի պարոն հիմնեց Գեղիչ քաղա-
քում մի ընկերակցութիւն, որ սկիզբ
եղաւ մի մեծ շարժման և օրինակ դար-
ձաւ բազմաթիւ նոյնատեսակ ընկերակ-
ցութիւններ կազմելու համար: Այդ ընկե-
րակցութիւնները ստացան Շուլցէ-Գեղիչ-
չեան անունը և այժմ թուով հասնում են
Գերմանիայում մէկ ու կէս հազարի: Նոյն
ձևի ընկերակցութիւններ հիմնվեցին Եւ-
րոպական և ուրիշ պետութիւնների մէջ,
նրանց թուում և Ռուսաստանի մէջ: Այդ
ընկերակցութիւնները կատարում են այժմ
տասնեակ և հարիւրաւոր միլիոնների գոր-
ծողութիւններ և պատել են իրանց ցան-
ցով դիւզական և բանւորական ազգաբնա-
կութեան ընդարձակ շրջաններ: Անցեալ
1898 թւի հաշուից երևում է, որ ըն-
կերակցութիւնների ձիւղ թիւն է 1544.
սրանցից 1400 ներկայացրել են ընկերակ-
ցութիւնների կենտրոնական վարչութեան
մանրամասն գրամական հաշիւ, որից ե-
րևում է, որ նրանք կատարել են երկու
միլիարդ մարկի շրջանադարձութիւն, որ
մանակցողների հիմնադրամը հասնում է
125 միլիոնի, պահեստի դումարը 411/2
միլիոնի, իսկ կրեդիտ են վայելում 512
միլիոնի:

Այդ դիւրութիւններից օգտվողներն
են բանւորներ, անկախ գործող արհես-
տաւորներ, գիւղացիներ, առհասարակ աշ-
խատանքի և փոքր կապիտալի ներկա-
յացուցիչներ: Ինչպէս յայտնի է, Շուլցէ-
Գեղիչեան ընկերակցութիւնների նպատակն
է գնել սպառելու ապրանքները սկզբ-
նական աղբիւրից, առաջին ձեռքից, օրի-
նակ գործարաններից և տալ ընկերակցու-
թեան անդամներին ձեռնուռ գնելով:
Դրանից առաջ է գալիս մեծ խնայողու-
թիւն, որովհետեւ միջնորդին տրված շա-
հը մնում է սպառողին և հեռացվում է
հարստահարութիւնը: Շուլցէ-Գեղիչեան
ընկերակցութիւնները իրանց վրա դարձ-
րին անտեսագէտների լուրջ ուշադրու-
թիւնը: Բազմաթիւ հետազոտութիւններ
և տնտեսական խորհրդածութիւններ
նուիրվեցին այդ նոր դրամադրերի ըն-
նութեանը: Տեղի ունեցան տնտեսագէտ-
ների ժողովներ նրանց նշանակութիւնը
որոշելու նպատակով: Մանրամասն և խոր
ընտելութիւնից պարզվեց, որ միայն Շուլցէ
Գեղիչեան ընկերակցութիւնները դեռ չեն

կարող գոհացնել բանւոր դասակարգի բո-
լոր պահանջները, որ բացի դրանցից ան-
հրաժեշտ են և ուրիշ ընկերակցութիւն-
ներ, որոնք միացնելն աշխատողներին և
կազմակերպելն արդիւնաւորական ձեռ-
նարկութիւններ, օրինակ բանային սեփա-
կան գործարաններ, որպէս զի արդիւնա-
գործութեան շահը չանցնի մասնաւոր
գործարանատէրերի ձեռքը, այլ մնայ աշխա-
տողներին: Բայց, այնու ամենայնիւ, Շուլցէ
Գեղիչեան ընկերակցութիւնների մատու-
ցած ծառայութիւնը խոշոր է և անու-
րանալի: Մասնաւոր այժմ, երբ բոլոր ըն-
կերակցութիւնները կապվել են մի ընդ-
հանուր գաղափարով, բանւորներին և
արհեստաւորների համար կազմվել է ա-
պահովութեան և փոխադրած օգնութեան
մի ուժեղ և ընդարձակ ցանց, որ կարո-
ղութիւն է տալիս յուսալ թէ ուրիշ ձեռ-
նարկութիւններ էլ կարող են աստիճանա-
բար իրագործվել աշխատաւորների օգտին:
Երբև յարգանք դէպի այդ մեծ շարժ-
ման նախաձեռնողը շուտով կը կանգնեցվի
Գերմանիայի մայրաքաղաք Բերլինում Շուլ-
ցէ Գեղիչի արձանը, որին այնքան պարտա-
կան է գերմանական աշխատաւորը: Նրա
արածք ընկերակցութիւնների կազմակեր-
պութեան գործի առաջին քայլն էր. ձա-
նապարհը հարթված է միւս քայլերի հա-
մար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կենդանի գործը զանազան փիլիսոփայական
մուկ դատողութիւններով մեղմեցրել մեր ժա-
մանակի խոցերից մէկն է կազմում: Ռուսաս-
տանում, ինչպէս յայտնի է, տոլ կայ և մի այն-
պիսի սով, որ գնալով աւելի և աւելի մեծ ա-
ւելումներ է գործում: Բայց խաւարած
հայրենասիրութիւնը աշխատում է ուրանալ
նրան. այս քանի օրերը «МОСКОВ. ВѢД.» լրագրի
մէջ մի յօդուած դուրս եկաւ, որի հեղինակը
փարիսեցիական արտասուները էր թմբու-
այն հանդամանքի վրա, որ կառավարութեան
և բարեգործական հաստատութիւնների հասցե-
րած նպատակները «անբարոյականացնում են»
դիւզացիներին, որոնք սովի սարսափներին են
մատնված և զանազան հիւանդութիւնների զոհ
են դարձել: Տեսնում էք, պոռոտախօս «հայ-
րենասիրութիւնը» իր հակամարդկային բոլոր
տենդենցիաները կարողանում է ծրարել լա-
խօքերի մէջ, բարձր գաղափարների տակ: Հաց
մի տուէք սովածին, նա դառնով ծուլութիւն է
սովորում, իր դաշան ու անտեսութիւնը անու-
շաղորդութեան է մատնում և դառնում է մի
ձրիակեր պարագլու: Կենտրոնական Աֆրիկայի
մարդկանքները գոնէ ճշմարիտ ֆրանկեր չունեն
իրանց զուլեի արհեստը արդարացիաբար հա-
մար: Իսկ քաղաքակրթ մարդկերութիւնը նը-
նուրդ զատարարակի և սրտացաւ բարեկամի դե-
մք: Եւ ինչն է ամենից զոռնելին: Ուժեղ և մեծա-
կոշ մարդկանքների այդ փմաստութեան համար,
կարծում ենք, մի լաւ դաս պիտի լինի այն

հարցը, որ տալիս է «Ревельскія Извѣстія» լրա-
գրը իր մի յօդուածի մէջ, որի նպատակն է
ցոյց տալ թէ ինչ կատարեց Պուշկին, եթէ այս
տխուր ժամանակներում յարութիւն առնէր և
տեսնէր իր հարկաւորայ յօդանունի պատ-
րաստութիւնները: Ահա թէ ինչ հարց կը դնէր
բանաստեղծը.
Ներակայեցէք թէ մարդը խելովում է: Ո՞րն
է աւելի ազնիւ բան. նստել նրան կանոն դե-
տի արին և ամբողջ աշխարհի համար օգ-
տակար մի տրակտատ կազմել թէ ինչպէս
կարելի է ոչնչացնել այն պատճառները, ո-
րոնցից մարդիկ խելովում են, թէ ուղղակի
ջուրը նետվել և դժբաղդին ամբ դուրս բերել:
Իւրաքանչիւր ազնիւ մարդ կը պատաս-
խանէ, որ աւելի լաւ է երկրորդն անել: Բայց
ազնուութիւնը, սիրտը, մարդկայնութիւնը չա-
տ և չառ հեռու են այն «հայրենասէրները», ո-
րոնք բացի մարդակեր խնամակալութիւնից աշ-
խարհի համար ոչ մի «փրկարար» միջոց չեն
ճանաչում...

«Տարալի» վերջին համարը ամբողջովին նը-
ւերված է ծերունի վիպագրող Պաշկեանցի յօ-
դանունին: Այդտեղ հանդէս են եկել մի քանի
հին և նոր գործեր, Պետրոս Սիմոնեանցի սկը-
սած և վերջացրած մեր նորագոյն բանաստեղծ-
ներից: Բայց ինչ ենք տեսնում դրանց գրութե-
ան մէջ. միայն ճանաչող, ազնուկ ու աղաղակ-
իսկ մի հատիկ չենք տեսնում դրանց յօդուած,
որ ծանօթացնէր հասարակութիւնը յօդանունի
գործունէութեան հետ, որ պատմել թէ ինչ ծա-
ռայութիւններ է մատուցել Պաշկեանց նոյն
գրականութեան—այդպիսի բան մի էլ որոնէք:
Ահա մի քանի գոհարներ այն ներբողներին, ո-
րոնցով «Տարալի» խումբը ողջունում է ծերու-
նի վիպագրողին.

Քառասուն տարի մշակում ես դու,
Փշալից դաշտը հայոց դպրութեան.
Արժանիս ես, Պերճ, գրչովդ աղու.
Հասարակութեան շնորհակալութեան:
Սա հին բանաստեղծի նուէրն է: Իսկ ահա
նորագոյններից մէկը.

Մեր fin de siècle պարսկականներին պե-
զանները այնքան ընտանացել են, որ մի քիչ
աշխոյժ չեն ստանում և այն ժամանակ, երբ
առջնում մի ամբողջ տօն կայ ճակնդրով,
կենացներով, երբ դրական տօնը պիտի թար-
մացնէ, ոգի ներշնչէ նոյն իսկ երկու ոտով կա-
ղով պեզաններին, կամ, եթէ թարգմանենք այս
կրօնական բառը գործածական աշխարհիկ
լեզուի,—«եքստենզիան»:

ՊԵՐՃ ՊԱՇԵԱՆՑ

Պերճ Պաշկեանցի յօդանունի առիթով հարկա-
ւոր ենք համարում մի երկու խօսք ասել այն
դիւրի մասին, որ նա ունի ճշմարտ մեր մատաղ
գրականութեան պատմութեան մէջ:
Պաշկեանցի առաջին նշանաւոր երկասիրու-
թիւնը՝ «Սօս և Վարդիթեր» լոյս տեսաւ 1860
թւին, այն ժամանակ, երբ դեռ ամենատաք
կերպով բանակուէր էր մղվում աշխարհաբարի
իրաւունքների և դրաբարի յաւակնութիւնների
մասին: Գրաբարը ունէր իր կողմը հոյակապ
մատենագրութիւն, իսկ աշխարհաբարը իր
կողմը անկիրթ ժողովրդական մասսա: Հաս-
կանալի է թէ այդ պայքարի ժամանակ ինչ մեծ
նշանակութիւն ունեցան Արտիմանցի «Վէրք Հա-
յաստանին» և Պաշկեանցի «Սօս և Վարդիթե-
րը» աշխարհաբարի յաղթանակը ապահովելու
գործի համար: «Սօս և Վարդիթերը» պարու-
նակում էր իր մէջ ժողովրդական լեզուի հա-
րստութեան ապացոյցներ թէ զգացմունք ար-
տայայտելու և թէ նկարագրութիւններ ներկա-
յացնելու:
«Սօս և Վարդիթեր» հեղինակը միւս կողմից,
տալով դիւզական ժողովրդի նիստ ու
կացի, շինական հասկացողութիւնների մի ըն-

դարձակ պատկեր: Միանում էր իր տաղանդա-
ւոր նախորդի սկսած գործին, այն է՝ հանել
գրականութիւնը կեղծ կրօնական և արհես-
տական թեմաների շրջանից և դնել նրան ըն-
դական ժողովրդի, ապրող մասսայի կեան-
քի շրջանի մէջ: «Սօս և Վարդիթերը» մօտե-
ցել էր կեանքին իրիւրական տեսակետից. նա
պարունակում էր իր մէջ պօսեայի տարրեր.
բայց սա սկիզբն էր: Աւելի ուշ Պաշկեանց հա-
ւատարիմ մնալով դիւզին, իր «Հացի խնդր»
և ուրիշ գրութեան մէջ մօտեցաւ կեանքին
ուրիշ տեսակետից և տուեց գիւղական ցաւերի
ու զրկանքների և հասարակական զեղծումների
տխուր նկարագրներ:

Իր բոլոր նշանաւոր գրութեան մէջ Պաշկեանց
մնաց նոյնը—այն է իբրեւ Արարատեան աշխարհի
և նրա ազգաբնակչութեան կեանքի նկարագրող:
Շնորհիւ իր պատմին, որ նրան թոյլ էր տալիս
երկար ժամանակ ապրել և ճանապարհորդել
Ներսիսեան նահանգի գիւղական շրջանում, Պաշ-
կեանց ստացել էր բազմաթիւ տպաւորութիւն-
ներ, որոնք ծառայում էին իբրեւ թեմաներ
նրա մեծ և փոքր գրութեան համար: Պաշ-
կեանցի հայեցակետերի հետ, նրա գաղափար-
ների հետ կարելի էր չը համաձայնվել. բայց մի
բան կար, որ անվիճելի է, դա Արարատեան
աշխարհն էր, որի նա անխնջ նկարագրողն է
եղել:

Պաշկեանց ներկայանում է իբրեւ հասարակա-
կան գործողներից մէկը վաթսուական թեմ-
բում, երբ գործողների թիւը արեւմտեան էր:
Պաշկեանցի կենսագրութիւնից յիշատակենք
հետեւեալ կէտերը: Նա ծնվել է 1837 թւին,
յունիսի 3-ին, ուրեմն այժմ 62 տարեկան է:
1851 թւին, իբրեւ Ներսիս V կաթողիկոսի որ-
դեգիր, մտել է Ներսիսեան դպրոց ուսանելու,
որտեղ աւարտել է 1855 թւին: Ուսումը աւար-
տելուց յետոյ նա գնացել է Աշտարակ ուսուց-
չութեան պաշտօնով. 1858 թւին տեղափոխ-
վելով Թիֆլիս՝ հրաւիրվել է ուսուցիչ Տեր-Յա-
կոբեանցի դպրոցում: 1860—1862 թվական-
ներին Թիֆլիսում Պաշկեանց ամենակցել է ա-
ռաջին թատրոնական ներկայացումներին և նը-
պատմել է իրական սեռի դպրոց բանաւորն:
1863 թվականից նա իրան նուրիւր է մաս-
կավարժական գործունէութեան գաւառներում
և օտար քաղաքներում, մինչև 1879 թվականը,
երբ նա նշանակվել է թեմական տեսուչ: Այդ
պաշտօնից յետոյ, որ վերջացաւ 1885 թւին,
Պաշկեանց եղել է մի տարի ուսուցիչ Ներսիս
թեմական դպրոցում և այնուհետեւ, սկսած 1887-ից
մինչև 1898 թվուր, ուսուցիչ Ներսիսեան դպրո-
ցում:

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

XIII

Պուշկինի մոտեցնում հարկաւորական ժողովում
տօնախմբութիւնը մի առանձին եռանդ ու ոգե-
ւորութիւն է ներշնչել նաև ուսուցչի գրականու-
թեան: Նա դա շատ բնական է: Մինչև այսօր
ուսական գրչի ու տաղանդի ներկայացուցիչ-
ներից, որոնցից շատերը հասել են բարձր փառ-
քի ու հռչակի, դեռ ոչ ոք այնպիսի յաղթանա-
կով չէ իշխած ուսուցչի գրականութեան վրա,
ինչպէս Պուշկինը: Պուշկինը իր տաղանդի փայ-
լով ամենախոշոր աղամանն է հանդիսանում
այդ գրականութեան թագի վրա: Նա իր քնարի
մայրան դիւթիւ ու զարմանալի ուժով, որպէս
մեծ մայրենի պոետ, գրաւել է գրականութեան
մէջ մայրենի պոետի պաշտօնը: Ահա ինչու այ-
սօր այդ գահի շուրջ սկսվել է խորին ոգևորու-
թիւն և այդ ոգևորութիւնը մի տեսակ տօնա-
կան կերպարանք է տուել նաև գրականութեան
Գրականութիւնն օր օրի վրա հարստանում է
բանաստեղծի երկերի նորանոր հրատարակու-
թիւններով: Նրանք արտաբերութիւնները բազմազան,
բազմաբովանդակ, հաղորդակ, լիակատար, պատ-
կերազարդ և այլն: Նրանք արդէն լոյս են տե-
սել, շատերը լոյս տեսնելու վրա են, շատերն
էլ պէտք է լոյս տեսնեն ապագայում, մի որոշ
ժամանակի ընթացքում: Բացի դրանից, եթէ

այսօր ռուսաց գրականութեան մէջ երևան է գալիս մի հինգ նոր գիրք, երկուսը կամ երեքը, կարելի է ասել, անպատճառ Պուշկինի մասին է: Մեծամեծ բանաստեղծն իր բանբարի խորութեամբ և ստեղծագործական ուժի ծաւալով վաղուց է, որ անհնգատ ըննադատութեան նիւթ է եղած գրականութեան մէջ: Նրա բարդ ու բաղդակողմանի գործունէութիւնը, նրա գրչի բեղմնաւորութիւնը, նրա ընտրի բաղձանչիւն և բաղձանաւազ երկնչները ստեղծել են մի ամբողջ ըննադատական գրականութիւն: Ակսած Բելինսկուց, Կորբուլիբովից, Պրոսպրովից—ռուսաց ըննադատական մտքի այդ փայլուն ներկայացուցիչներէն մինչև մեր օրերը Պուշկինի պոէզիան շարունակ վերաճելով, շարունակ հետախաղաղել է ուսումնասիրվել է, որպէս մարդաբանական լի ծովի յատակ, որպէս մի ոսկեհանք: Նոյն ուսումնասիրութիւնը, նոյն հետաքրքրալից վերաբերմունքը դէպի Պուշկինի անձը, նրա կեանքն ու գործերը մի նոր եռանդով շարունակվում է և՛ այսօր, որին առիթ է տուել բանաստեղծի ծննդեան հարիւրամեակը: «Պուշկին անունն է, որ այսօր ցնցել է ռուսաց զբոսական աշխարհը. այդ անունն է, որ այսօր անդին վարդապետներով ու գոյներով շարունակ կրկնվում և փայլում է գրականութեան լայն հաճախ էջերում:

Հարիւրամեակի առիթով լոյս տեսնելիք բանաստեղծի երկերի լրակատար հրատարակութիւններէն ամենալուրջն ու կատարելագոյնը պէտք է համարել, անտարակոյս, ան հրատարակութիւնը, որին ձեռնամուխ է եղած Պետերբուրգի Գիտութիւնների ձեմարանը (Академия Наук): Այդ պատկառելի հինգերորդական ռուսաց մըտաւոր կեանքում յայտնի է իր միշտ պատկառելի գործունէութեամբ և նրա ձեռնարկած Պուշկինի երկասիրութիւնների լրակատար հրատարակութիւնը լինելու է մի խոշոր գործ, որի աւարտումը, զուցէ, ամբողջ տարիներ տեւէ: Այդ մեծամասշտկ հրատարակութեան առաջին հատորը լոյս կը տեսնի Պուշկինեան տօներին: Հրատարակութեան խնամքին է յայտնի ակադեմիկոս Մայկով:

Նոյն տօներէ համար Պետերբուրգում ապագրվում է մի մեծ ժողովածու, որ նուիրված կը լինի մեծանուն բանաստեղծի յիշատակին և կը կոչվի «Пушкинский Сборник»: Ժողովածուն մասնակցում են ռուսաց գրականութեան համարեա բոլոր անուանի ներկայացուցիչները՝ բանաստեղծներ, բանասիրտներ, հրապարակախօսներ, կրտսերներ: Ինչպէս հաւատարի աղբիւրից իմացանք, այդ ժողովածուի մէջ զետեղված կը լինի նաև հայ գրականութեան վերաբերեալ մի յօդուած, որ պատկանում է մեր հասարակութեան քաջ ծանօթ երիտասարդ հայագէտ Իւրի Վենելովսկու գրչին: Յօդուածը կրում է «Պուշկինը հայոց գրականութեան մէջ» խորագիրը և շօշափում է այն աղբիւրները, որ ռուս բանաստեղծին ունեցել է հայկական պոէզիայի վրա: Խօսվում է նաև հայոց գրականութեան մէջ եղած Պուշկինի երկերի թարգմանութիւնները մասին:

Պուշկինի երկերի բազմաթիւ պատկերազարդ հրատարակութիւններէն, ի միջի այլոց, առանձին ուշագրութեան արժանի է Մոսկվայում տըպագրվող՝ բանաստեղծի «Բաղդասարայի շատրուանը» պօէման, որը լոյս կը տեսնի առաջիկայ տօներին: Մենք նախադրութիւն ունեցանք մօտից ծանօթանալու այդ շքեղ և մեծամասն հրատարակութեան հետ, որի գլուխ բերելը տարիներէ զործ է եղած: Պօէմայի պատկերներն ու զանազան զարդանկարներն ամբողջապէս պատկանում են Մոսկվայում ապրող հայ նկարիչ Վարդգէս Սուրենյանին, որը արդէն անունն է հանել ռուսաց զեղարուեստական աշխարհում: Երիտասարդ նկարիչը քիչ չանք չէ թափած իր այդ գործի վրա: Նա յատուկ այդ նպատակով ամիսներ ապրել է Բաղդասարայում և տեղն ու տեղն ուսումնասիրել այն բոլորը, ինչոր ներկայացնում է իր պատկերներում Պուշկինի պօէմայից: Մանր ու խոշոր պատկերներ, զանազան զարդանկարներ ընդհանուր թիւը հասնում է 76-ի: Ինչպէս իմացանք, այդ բոլորը նոյնպէս հանդէս դրված կը լինեն ռուս գրասէրների ընկերութեան նախաձեռնութեամբ կազմած Պուշկինեան ցուցահանդիսում, որի համար հայ նկարիչը տուել է իր համաձայնութիւնը:

Առաջիկայ գրականական տօներին առիթով արդէն լոյս տեսած բազմազան հրատարակութիւններէն չենք կարող մի քանի խօսք չստել մեր առաջ դրած մի հետաքրքրական գրքի մասին, որ նորերս է լոյս տեսել այստեղ և կոչվում է «Рыцарские поэты о Пушкине»: 226 ոտանաւորից և աւելի բան 300 էջից բաղկացած այդ աշխատու-

թիւնն ամփոփում է իր մէջ այն բոլորը, ինչ որ Պուշկինի կենդանութեան մասնակցի (1815 թվից) մինչև մեր օրերը լոյս է տեսել ռուսաց բանաստեղծական գրականութեան մէջ ազգային բերթողի մասին: Դա մի փայլուն, բազմաթիւ երգչիներ ղեկորութեամբ կերտած հայելի է, որի մէջ ցոլանում է Պուշկինի ամբողջ պատկերը, նրա գրական ամբողջ հասակը: Գրքի կազմողն իր կարճ նախաբանում, ի միջի այլոց, ասում է. «Ո՛չ միշտ շնորհալի, բայց միշտ անկեղծ և զգացված արձագանք են տուել մեր պօէտները Պուշկինի կեանքի բոլոր անցքերին—ողբացել են նրա ապագամ մահը, փառանայելի տօնախմբել են նրա մահաբանի բացումը, սրտաղին խօսքով միշտ յիշատակել են նրա ժամանակ տարեդարձները: Սե իրաւ, չը կայ ռուս պօէտ՝ յայտնի կամ սակաւայայտ՝ որ ողբորված չը լինի Պուշկինի անունով, երգած չը լինի նրա փառքն ու ձեռնութիւնը: Լերմոնով, Եկերասով, Կոչով, Պլեշչեկ, Տիւտչեկ, Մայկով, Ֆետ, Պոլոնսկից, Սապիգով, Բարատինսկից, Փեմլուսկից, Վենեվիտով, Ապոլլոնով—ռուսական մուսայի այդ բոլոր անուանի որդեգիրները, որոնք զարգացում են ռուս պօէտներից Պուշկինի մայրն գրքի էջերը,—բոլորն էլ ջերմ զգացումներով ծունկ են խոնարհած հանձարեղ բերթողի անա՛նձագործ արձանին: Դրանք բոլորն էլ նուիրական պարտք են համարել միտքէր միաշունչ փառքն ազգային մեծ երգչի անունն շուրջը, երգչի, որ իր հայրենիքի ռուսաւոր մարդաբան է եղած, երգչի, որ այդ հայրենիքի սիրով վաւաճ՝ երգել է.

Пока надеждою горимъ,
Пока сердца для чести живы,
Мой друг, отчизнѣ посвятимъ
Души прекрасные порывы!

Ա. Մատուրեան

ԲԱԳՈՒՆ ԴԱՌՔԱՐԻՆԱՍԵՐՈՂՆԵՐԻ XII ԺՈՂՈՎԸ

(V նիստ մայիսի 8-ին)

Այս հինգերորդ նիստը ամենաբազմամարդ նիստերից մէկն էր: Ոչ այնքան ձայնաւոր նախադրեալներէն էին ժողովել, որքան կողմնակի հետաքրքրվողներ, որոնք լցել էին դռնայի ընդարձակ դահլիճը: Պէտք է տեղի ունենար երկու զեկուցարի ընթերցում—մէկը միւսից հետաքրքրելու, միւսը զեկուցումը վերաբերում էր Աղաթեանի թերակղզու և առհասարակ ենթադրվող նախադրեալի հոգեբան լուրջ հետազոտութեան անհրաժեշտութեանը: Աղաթեանի թերակղզին թէև արդէն իր պատմութիւնը ունի, թէև տասնեակ տարիներ են, որ նախադրեալն արդեամբերութիւնը սկիզբն է առել այդտեղ, թէև հարիւրաւոր տեսակ-տեսակ հոգեբան քննարկել և հարկաւոր միլիոն պոլլերով նախադրեալներ, այնուամենայնիւ ինչպէս հարկն է դեռ չէ ուսումնասիրված այդ թերակղզու շերտերի երկրաբանական կազմութիւնը, հէնց այս պատճառով էլ արդեամբերութեան գործը դատապարտված է մի այնպիսի դրութեան, որ զիտակցաբար զեկաւարկել անկարելի է դառնում: Առաջական զեկաւարկն են յաճախ առաջնորդ հանդիսանում, որոնք ինչպէս և ուրիշ զեկաւարկ—կապված են լինում անորոշութեան հետ. փոխանակ ակնկալած արդեամբութեան—չափ անգամ հանդիպում են անսպասելի անաշուկութեան: Դիցուք հարկան նախադրեալում առատ նախ էր քաջում. այդ նախադրեալի մի քանի սաճէն տարածութեան վրա հոր է քանդում և միւս հարեանք, ենթադրվում է, թէ նա ևս առատ նախ պիտի ստանայ, որովհետև հետո չէ հարեանքի առատ նախ մտող հորերից: Սակայն պատահում է երբեմն, որ ոչ միայն առատ, այլ և բոլորովին նախ չէ ստացվում: Նոյն իսկ մի և նոյն նախադրեալը քաջվող հորերի խորութիւններով վերաբերեալ անպիսի տարբերութիւններ են երևան գալիս, այնպէս որ նախորդէն որչա համարեա թէ ոչինչ չէ կարելի լինում ասել. կարող է և՛ աջող լինել, և՛ անաշուկ: Այս զգալի անյարմարութեան, այս անորոշութեան շնորհիւ անպիսի վիճակներ են տեղի ունենում, որոնք արդեամբութեան հետ շարունակ զուգընթացում են նախադրեալի արդեամբութեան գործում: Այդ մեծ չարիքի առաջն առած լինելու համար՝ զեկուցանող լինեմէնք Լեքեղի առաջարկում է ժողովին լուրջ ուշադրութիւն դարձնել ուսումնասիրութեան գործին՝ ձեռնարկել ուսումնասիրութեանը, ձեռք բերել, ժողովել, կանոնաւորել և կարելի դնել բոլոր փորձած և փորձող նախադրեալի վերաբերեալ եղած նիւթերը, նկարները և տեղեկութիւնները—որոնք գտնվում են ցիրուցան, զանազան տեղերում՝ և՛ լեռնային վարչութեան արխիւում, և՛ խորհրդի պահեստում, և՛ մաս-

նաւոր մարդկանց մօտ: Իւրաքանչիւր տարվայ այդ տեղեկութիւնները կարգի բերելու համար՝ պահանջվում է տարեկան ութ հազար ռուբլի: Բացի դրանից, զեկուցանող պ. Լեքեղի անհրաժեշտ է համարում կանոնաւորել և պարտադիր դարձնել ժողովի համար նաև ենթադրվող նախադրեալի հոգեբան հետազոտութեան խնդիրը: Թէև մասնաւոր մարդիկ, զանազան ֆիրմաներ այժմեան նախ քաջվող հրապարակներէն զուրս հետազոտութիւնների փորձեր աւել են, բայց ոչ այնչա որպէս զի փորձը արդ հետեանը ունենայ և իրար ծախքեր տեղի չունենան, պէտք է ընդհանուր ոյժերով կանոնաւոր հետազոտութիւններ կատարել և նոր նախադրեալի հոգեբան գտնել: Այս վերջին ձեռնարկութեան համար, զեկուցանողի կարծիքով, ամենաբարձր պէտք է յատկացնել տարեկան 100 հազար ռուբլի:

Զեկուցարարի մէջ արտայայտած մտքերը հաւանութիւն գտան ժողովականներից: Վերաբանութեան նիւթ դարձաւ միայն ծախքերի հարցը: Ժողովականներից ոմանք այն կարծիքի էին, որ այդ ձեռնարկութիւնը եթէ կանոնաւոր տարվա—անկախօք հարկեր հազարներ ծախք կը պահանջէ. ու պիտի անէ այդ ծախքը: Նախադրեալներէն ժողովը չէ կարող անել այդ, և եթէ կարողանայ էլ—այնքան շահ չունի, որովհետև նախադրեալի հոգեբան կամ պետական են, կամ մասնաւոր սեփականութիւններ կատարելուց յետոյ եթէ այս կամ այն տեղում նախ երկայն—այն տեղերի գնքեր պէտք է բարձրանան, և ու պիտի զիտարկուէ շահի՛ր դրանից՝ մասնաւոր սեփականատէր կամ պետական զանաւարներ, որեւէն այդ մասին պիտի հոգան և նրանք: Այս ուղղութեամբ զանազան լիւր և դժ ղիտողութիւններ լինելուց յետոյ՝ ժողովը որոշեց յանձնել խորհրդին, որպէս զի վերջինս հարցը զաւթակողմանի կերպով մշակէ և ներկայացնէ առաջիկայ XIV ժողովին:

Երկրորդ զեկուցարարը, որ կազմել էր Բադուի չըքանի ինժեներ Գալիլով, ամբողջովին վերաբերում էր նախադրեալներում աշխատող բանւորներին, նրանք ընտանիքների դրութիւնը բարոյեղութիւն գործին: Նկարագրելով բանւորների կացութիւնը—նրանք շարքա զեկաւարկ և զբանցից առաջացած այն զբաղղութիւնները, որոնք զրկում են միանգամայն նրանց աշխատելու ընդունակութիւնից, անպիտեցանում, զուրս չարտում դէպի անվերջ զրկանքների ու թշուառութեան աշխարհը—ինժեներ Գալիլովը առաջարկում է կազմակերպել մի ընկերութիւն՝ նախադրեալների ծառայողներին և բանւորներին օգնելու նպատակով: Միջոցների մասին նա առաջարկում է որոշել անդամակցական տուրքեր, որոնք պարտաւորեցուցիչ լինեն ոչ միայն նախադրեալներէն, այլ և բոլոր գործարարատէրերի, արհեստանոցների և զանազան ձեռնարկութիւններ ունեցողների համար: Զեկուցումը ժողովականների կողմից ընդունվեց բոլուն ծախքաւորութիւններով: Իրագործելու եղանակի մասին տեղի ունեցան խորհրդածութիւններ և զանազան ղիտողութիւններ: Վերջապէս որոշվեց յանձնել առանձին մասնաժողովին հարցը մշակելու և կանոնադրութիւն կազմելու համար: Բայց որպէս զի գործը չը ձգե՛ր ձգվի և առկա չը մնայ մինչև հետեան չեքութեան ժողովը, որովհետ չը սպասել, այլ կանոնադրութիւնը պատրաստելուն պէս՝ արտաբայ կարգի ժողով հրաւիրել յատուկ այդ գործին կանոնաւոր և պաշտօնական ընթացք տալու համար:

ՆԱՄԱԿ ԳՈՐԻՍԵՅՑ

Մայիսի 12-ին

Գենեքալ Լիսէնկօի սպանութեան համար կատարելի տակ ընկնան երկու զուբայեցի թուրք Աղա-Հուսէյն Լաշի բէկ օղլի և Ալի Աբաս Թուրք օղլի, որոնք և բանտարկեց ըննիչ Սօկօլօվսկի: Այդ սպանութիւնը մի սխալի հետեանք է և խեղճ գենեքալ Լիսէնկօ դարձաւ անմեղ գնդ: Գործի հանգամանքը հետեալ կերպով են պատմում: Առաջին մեղադրվող Աղա-Հուսէյնը ըրող փախցում է Խիզի գիւղից մի թուրք և թաղցնում է քաղաքացու մի տան մէջ, որտեղից պէտք է ծագեալ հաղուստով Նոյն գիւղեր փախցնէր կառնով գիւղը: Աղա-Հուսէյնը հաւատարմ է լինում այդ ամուսնութեան (փախցողներ իրար սիրելիս են եղել նրանց ծնողների ցանկութեան հակառակ) և վճռում է սպանել այդպէս ծանապարհին: Նա և իր յանցաւորը զընում, թաղնվում են և սպանում: Գենեքալ Լիսէնկօ հաղնված է լինում տաք, իսկ պարանոցի և զլիւր վրայով ծածկած է լինում մի երկար

սպիտակ բաշիկ—անս այդ զբաղղ բաշիկը լինում է տխուր, ողբերգական մահվան պատճառ: Զարագործները ընդունում են սպիտակ բաշիկը՝ սպիտակ չադրայի տեղ և, կարծելով, որ նրա մէջ փախցնվածը փազող աղբիւն է, տեղն ու տեղը հրացան են արձակում, մահացու վէրք հասցնելով գենեքալին: Գենեքալ Լիսէնկօ ոչ մի հարստութիւն չէ թողել: Սպանութիւնից յետոյ, առանց ժամանակ կորցնելու, իսկոյն գնում են սպանութեան տեղը դաւառապետ Բօգդանովիչը պրօկուրօր Սարօշկիսկի, ըննիչ Սօկօլօվսկի և բժիշկ Աբրամովիչ: Քննիչ Սօկօլօվսկի պրօկուրօրի հետ խիստ եռանդուն կերպով է այդ գործի ըննութիւնը սկսել, բաղձալի մարդկանց հարց ու փորձ է անում: Հետագիւրներ են ուղարկվել արդարադատութեան մինիստրին և ժանդարմներ չէֆին: Իսկ գործի ըննութեան մասնաւորութիւնները ամեն շաբաթ երկու անգամ հաղորդում են Թիֆլիսի դատաւարանական պալատի պրօկուրօրին: Գործը դեռ չէ վերջացած ըննիչի մօտ:

Մայիսի 5-ին, 6-ին և 7-ին ղինուրական դատարանը, որի նախագահ գենեքալ Պետրուշկին, պրօկուրօր՝ Բէրնիցկի, անաւաններ՝ իշխ. Մակաեկ, Աստօլօւօւ, Կարլով, կապիտան Ալիբէկով, ըննելով զուլարցի Շիխ Մամէդ Սօլման Ախմէդ օղլի, Փաթուլլա Շիխ Նամազ օղլի և Ախտի գիւղերից Կուրբան Ալի Մամէդ օղլի աւազակների գործը, հետեալ վճիռը կապարեց. առաջին երկուսին մահվան պատժի ենթարկել կախաղանի միջոցով, իսկ վերջինին արդարացին: Աւազակները մեղադրվում էին նախ՝ որ ընդդիմադրութիւն են ցոյց տուել պրօկուրակն իշխանութեան, սպանելով ձիաւոր պահապան Փալիբ օղլուն. երկրորդ՝ որ քաղաքի տեղից փախել են և երրորդ՝ որ մտադրված են եղել խուճը կազմել միասին, զանազան շարագործութիւնների և սպանութիւնների համար: Վերջինայինք աւազակներին,—նկատելով պրօկուրօր իր ճառի մէջ,—և մահվան պատժի փոխարէն, տաժանակիր աշխատանքների ենթարկենք,—այն ժամանակ, պ.պ. դատաւորներ, այդ աւազակները դարձեալ կը փախան քաղաքի տեղից: Ղուբայի կողմերը, և՛ մի շարք եղբնապարծութիւններ կատարելուց յետոյ, կը կախաղանակեն, որպէս զի մենք յետոյ ձեռ հետ դարձեալ գանք այստեղ, Ղուբա, ստիպված լինելով նրանց գործը երրորդ անգամ ըննելու:—Լաւ չէր լինի, շարունակե՛ք ճառասուր, որ հէնց հիմա պատժենք նրանց արժանաւոր պատժով, այդ հանգամանքով միայն կարող էր զեկուական հասարակութիւնը միանգամայն ազատ, անվնաս ապրել, ազատվելով շարագործ աւազակների հալածանքներից և հասցրած վիճակներից: Բայց ղինուրական դատարանը վճենց իշխան կառավարչապետի միջոցով միջնորդել թագաւոր Կայսրի առաջ, ամենապատակօրէն խնդրելով, մեղմացնել պատժի, փոխարինելով կախաղանը մշտական տաժանակիր աշխատանքների:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ

Մայիսի 10-ին

Մի վերին աստիճանի տխուր և ծնող տղաւորութեան տակ զուրս եկանք մայիսի 9-ին տեղի ունեցած Վերկորդ երկուստարութիւնը: Այլնայի ներկայացման դահլիճից: Երբ մի կողմից դերասանական խումբը հիացնում և առաջափառ էր անում ներկայ եղող փղերիկ հասարակութեանը, միւս կողմից տեսնում ենք մեր ժողովրդի մեծագոյն մասնի յանցարար անտարբերութիւնը դէպի թատիւր, դէպի գեղարուեստը և մինչև իսկ մեր բեմի ամենալաւ ներկայացուցիչները: Ինչ անուն տալ այս հանգամանքին, աս մի մեծ ամօթ է մեր հասարակութեան համար: Սրանով մեր վաճառական և ունեւոր զատակարգի մեծ մասը կրկին ապացուցեց, որ իր համար բացի փողի աշխարհից չը կայ մի այլ աշխարհ, որ նրա տղէտ ու թմբածարի և հոգու համար ոչ մի ղին չունեն ոչ ճաշակի դարգացումը, ոչ էլ զեղարուեստական զուարճութիւնները: Ամօթ, հազար ամօթ: Ինչպէս առաջին խաղի ժամանակ, այս անգամ էլ դահլիճի երկու երրորդ մասը դատարկ էր: Մուտքը այնքան աննշան էր, որ ամօթ է յիշատակելու:

Գալով խաղին, պէտք է ասել, որ Նեվէժինի այս զեղեցիկ դրաման խումբը շատ աշող կերպով խաղաց: Տիկին Սիրանոյ՝ Վալէրիանա Ալեքսանդրովնայի դերում, սկզբից մինչև վերջը անմասն էր: Անտարակտներում բաղձից բեմ մի ծաղկեայ փունջ մատուցվեց: Պ. Պետրոսեան՝ Գառնիկի դերում ցոյց տուց իր տաղանդը:

հաշտ գեղեցիկ էր երբորդ և չորրորդ գործողությունները մէջ. բայց սկզբներում, հասակաւոր սիրահարը չարտայայտեց զոնէ զսպման սիրոյ տանջանքներն ու բռնկումները: Դերասանին վարձատրեցին բուն ծափահարութիւններով: Տիկին Մելքեան՝ ուսուցչուհի Տէլէգինայի և Զաքէլ՝ Սէտկինայի դերերում այդ երեկոյ շատ գեղեցիկ էին: Նրանց խաղը և մտածված էր և համապատասխան: Պ. Վրոյթը Պարուսովի դերում միջին կէս էր լինում. խեղճ դերասանը կատարեալ նահապետութեան է մասնաւոր, երբ խաղում է իրան անհամապատասխան դերեր. իսկ մեղ համար շատ ցաւալի կը լինի, եթէ պ. Վրոյթ հեռանայ Ալեքսանդրովից առանց ցոյց տալու իր կոմիքական ընդունակութիւններն ու շնորքը: Պ. Յարութիւնեան իր փոքրիկ դերում ցանկալի տպաւորութիւն թողեց, իսկ պ. Աղայեանին, Վիտալիի գեղեցիկ դերում, պակասում էր անհրաժեշտ զգացմունքներն ու տանջանքները:

Խումբը այսօր ուղևորվեց դէպի Կարս. վերադարձին վերջին անգամ այտուղ կը խաղան «Փոյր Քերեզ», կամ «Մենաստանուէ» դրաման: Այս անգամ քնն աշտը է անէ Ալեքսանդրովից հասարակութիւնը...

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 6-ին Ներանդները յայտնեցին պակասում են: Ստացված վերջին տեղեկութիւններէց յայտնվում է, որ առ այժմ երկաթուղու գիծը Ալեքսանդրովից կը հասնի մինչև Ներան և զլուսաւոր կայարանը լինելու է քաղաքի մօտ. իսկ մինչև պարսից սահմանը—Ջուլֆա, առ այժմ յետաձգվում է, որովհետև կան որոշ նախագծեր, այն է Նախիջևն մինչև Զուլֆա և Կարսից՝ թիւրքաց սահմաններով, մինչև Զուլֆա. իսկ թէ որը կընդունվի, այդ դեռ յայտնի չէ: Այսպէս թէ այն պէս, Ներանի գիծը և զլուսաւոր կայարանի Ներան լինելը վճռված պէտք է համարել և մի երկու տարուց յետոյ Ներանը կը թևակոխի մի նոր դարադրուի, մեղ համար կը սկսվի մի նոր կուլտուրա: Նոր կուլտուրայի հետ առաջ կը դան նոր պահանջներ, մեղ կարիք կը զգանք ճիւղերու երկաթուղու, երկաթաբանական լուսաւորութեան և այլն: Հեռաւոր մարդիկ աւելի շուտ զգացին այդ բանի կարիքը և հաս վերջին տարիներում, մասնաւոր այս տարի, մի բանի խնդիրներ տրվեցին քաղաքային դռնային ճիւղերու իրաւունքը ձեռք բերելու համար: Արեւմտ լեռները, մինչև անգամ մի ընկերութեան կողմից առաջարկութիւն է եղել երկաթաբանական լուսաւորութեան իրաւունքը ձեռք բերել:

Այս աշտիս փորձերը կարծէք բայց արին երևանցու աչքերը: Մի բանի մարդկանց մէջ միտք է յղացել երևանցիկ կազմել մի ակցիօններական ընկերութիւն և վերջինը ձեռքարշի ու երկաթաբանական լուսաւորութեան իրաւունքը և գործի անցնել: Կան մարդիկ, որոնք աւելորդ են համարում Ներանի համար ձեռքարշը և երկաթաբանական լուսաւորութիւնը, կան և այնպիսիներ, որոնք չեն հաւատում, որ երևանցիկները մէջ կարողանայ մի այդպիսի ընկերութիւն կազմակերպվել: Բայց մենք անտեղի ենք գտնում թէ մէկը և թէ միւսը: Ներանցին ոչինչ չէ տեսել և չի էլ կարողանում համոզվել, որ հաւանական ոյժ կայ մեր մէջ: Բայց բաւական է առաջինը ըստ—գործի սկզբնաւորութիւնը, որ հաւատ ներքնի երևանցուն: Այդպիսի խոշոր ձեռնարկութիւնը անհատական ուժից վեր է, իսկ միացած ուժերով կարելի է միշտ գործի ձեռնարկել, եթէ միայն թողնեն «խէթ» աչքով միմեանց վրա նայելը և չըկամութիւնն ու մեծամտութիւնը:

Ներանը ունի այնպիսի բնական յարմարութիւն երկաթաբանական թէ ձեռքարշի և թէ լուսաւորութեան, որը չունեն շատ ու շատ քաղաքներ: Զարդանը սահանքաւոր դեռ է և հոտում է շատ բարձր մակերևոյթից, բերելով զաւելւայր բարբարոս ուղին. բաւական է կանոնաւորել այդ գետի հոսանքը, որ առաջացնի տանիակ շոգեշարժիչների հաւասար և մի և նոյն ժամանակ յաւիտենական ոյժ. և այն դէպքում, երբ որոշ քաղաքներ ահալան զուսառնք են ծախում շոգեշարժիչների վրա, Հարպուտը կը տայ մեղ ձիւրաբար, մշտապէս: Այս այս բնական յարմարութիւնն է, որից կօգտվեն ապագայ ձեռնարկութեան զուտ անցանքներ, իսկ շատ և շատ ցանկալի էր, որ դրանք լինէին երևանցիները: Զանկանում ենք աշտիւթիւն այդ միտքը յղացողներին, իսկ թերահաւատներին՝ հաւատ դէպի ընկերական գործը:

Ա—Գ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերակի, մայիսի 16-ին, տեղի ունեցաւ Պերճ Պռօշեանցի քառասունամեայ յօրեկեանի կատարումը: Թոքեկարի տանը ժողովվել էր երկուսեակ մինչև 80 անձ: Ներկայ էին՝ քաղաքացիական և ռազմական, հայ մամուլի և տեղական «ՊՅՈՅՐ» և «ԵՊԻՏԵՄԻԱ» լրագրողների ներկայացուցիչները, Ներսիսեան դպրոցի ուսուցիչները, գրական և մանկավարժական գործողներ, Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ներկայացուցիչներ և մասնաւոր անձինք: Թոքեկեանեան կարգաց մասնաժողովի կողմից ձօն է ներկայացրեց յօրեկեանի առիթով հաւաքված գումարի բանկային անդորրագրերը: Այնուհետև մասնաժողովի քարտուղար Բ. Նաւասարեան կարգաց ստացված ուղերձները և շնորհաւորութիւնները: Նախ և առաջ կարդացվեց Վեհապառ Վաթիկանի ուղարկած կոնդակը, յետոյ Կ. Պոլսի նախկին պատրիարք Մ. Իզմիրեանի նամակը, Քիֆիսի թեմի առաջնորդ Գ. Սուրենեանի շնորհաւորութիւնը, այնուհետև ուղերձներ Քիֆիսի Հայուհեաց ընկերութեան, Կովկասեան Բարեգործական ընկերութեան կողմից, Բագուի հայ կանանցից, Բերլինի հայ ուսանողութեան կողմից, Եւթիմանի ձեռնարանի, Ներսիսեան դպրոցի և Շուշու թեմական դպրոցի ուսուցչական խումբից: Ալեքսանդր Թարխանեան կարգաց ստացված հեռագրները, սկսելով Գառնիից, չեղծ ուղղելով: Գ. Սուրենեանի կողմից կարդացվեց մի ուղերձ: Ա. Գալստիսի մի բանի խօսքով ընտրեց Պռօշեանցի դիմքը հայոց գրականութեան մէջ: Ա. Արաբկանեան յայտնեց, որ Պռօշեանցի վէպերի տպագրութիւնը կառված է եղել հայ աստագիրների հետ. «Սոս և Վարդի» թերթը տպվել է Վառնիկում, իսկ միւս վէպերը՝ Փարճում և ՎՊրոքում: Փ. Վարդանեան յայտնեց, որ Պռօշեանցի յօրեկեանը հայ գրականութեան երկարամեայ զարգացման վկայականներէն մէկն է: Գէորգ Բարխուդարեանց և Զար. Թումանեան կարդացին ոտանաւոր: Յով. Թումանեան ողջունեց Ղ. Աղայեանի կողմից. Ա. Ներսեան նուէր բերեց իր Ներսէս Միկեայելովից: Տօնը սկսվեց ժամի 1-ին և տևեց ժամ և կէս, վերջանալով յօրեկեանի կենացով:

Մեղ հաղորդում են, որ կոչակարների առաջին ժողովին չեն կարողացել շատ ցանկացողներ մասնակցել, չը գիտնալով ժողովի տեղը: Այդ պատճառով առաջին մասնաւոր ժողով կազմողները որոշել են առաջիկայ կիրակի օր հրաւիրել երկրորդ ժողով, նշանակելով գումարման տեղը: Նախաձեռնողները կարծում են, որ նպատակադարձ է նշանակել անդամավճար 100 ռուբլի. կանոնադրութեան մշակութիւնը պէտք է կատարել յատուկ յանձնաժողովի ձեռքով, որին պէտք է ընտրել ընկերակցութեան մասնակցել ցանկացողներ ընդհանուր ժողովը:

Մեղ խնդրում են յայտնել, որ այսօր, մայիսի 18-ին, նշանակված է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, որի պարագլուխները կը լինեն. 1) Ընթացիկ գործեր. 2) Այդպիսի դպրոցի կառավարչի, խորհրդի մի անդամի, խմբագրական մասնաժողովի և ֆիլոսոֆիայի կոմիտեում մասնակցող ներկայացուցիչ ընտրութիւնները: Նիստին կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք:

Ուրբաթ, մայիսի 14-ին, Քիֆիսի Ալեքսանդրեան այգում տեղի ունեցաւ մանուկների խնամատարութեան ընկերութեան օգտին ժողովրդական զբօսանք. իսկ կիրակի, մայիսի 16-ին, Մուշապուր այգում՝ Վրաց գրադիտութեան տարածման ընկերութեան օգտին: Երկու դռնանքներն էլ մեծ աշտիւթիւն ունեցան և տրւին նշանաւոր եկամուտներ, որոնց ձեռք թիւը դեռ յայտնի չէ:

Օղեսայի լրագրողները հաղորդում են, որ վերջին վիճակաւորութեան ժամանակ 200,000 ռուբլին տարել է Թայմ Բուրբոնեան սպանիական պրինցը: Միւսպէս հաղորդում է «ՊՅՈՅՐ» լրագրի Օղեսայի թղթակիցը, սրանից 9 ամիս առաջ Վիտի կրէդիտը: Օղեսայի բաժնուէր նա գնել է աշտական կալուածական բանկի վիճակաւոր տոմսերից 100 հատ, որոնցից մէկին ընկել է այժմ այդ խոշոր գումարը:

ԿԱՂԱՌՈՒՆԻՑ մեղ գրում են. «Շաբաթ օր, մայիսի 8-ին, հայոց նախկին եկեղեցական-ձըլ խական դպրոցի դասընթաց, տեղիս սերողները

մասնակցութեամբ, դերասան Մ. Վարդեան խաղաց «Արշակ Բ.» ողբերգութիւնն արարուածով, Տեղ. Խ. Գալֆայեանի և «Երկաթարի յիշատակարան»: Արշակի և խեղաբարի դերը խաղաց պ. Մ. Վարդեան, որը տպաւորութիւն գործեց ճանդիտականների վրա: Սերողներէց աչքի էին ընկնում պ.պ. Ա. Տէր-Ղազարեան և Պետրոս Մանուկեան: Գահիճը ծայրէ ծայր լի էր դահապան դասակարգի մարդկանցով: Տեսարանները վերջում լավում էին բուն ծափահարութիւններ, իսկ դրոսում նուագում էր մուղիկան, որը աւելի կենդանութիւն էր տալիս: Ինչ կը լինէր, եթէ հայ բեմին ծառայողներից շատերը, պ. Վարդեանի նման, Կաղզուանի պէս խուլ քաղաքները գնէ տարին մի երկու անգամ ներկայացում տային:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեղ գրում են. «Մի շաբաթ է, որ մեր գիւղացիներից աւելի քան 300 հոգի բան ու գործ թողած՝ կանգնած են սինդիկատ վանական կառավարութեան գրասենեակի առաջ և փոխարինաբար ցորեն են խնդրում, սակայն սինդիկատին այժմ քաջ տալով, ասում են, որ որոշել է 300 տներին միայն 10 խալվար (90 պուր) ցորեն բաժանել, ուրեմն ամեն մէկ ընտանիքին հալիւ միայն մէկ պուր: Լուտ ենք, որ ժողովուրդը, յուսահատված սինդիկատի որոշումից, վճռել է դիմել նահանգապետին և խնդրել, որ թղթաւորվի իրանց շտեմարանի դռնարկը, որ պահվում է պետական գանձարանում, փոխարինաբար վերցնել մի գումար՝ կարօտ ընտանիքների համար ցորեն գնելու:

ԳԱՐԱՎԱՆՍԱՐԱՑԻՑ մեղ գրում են. «Անձրևում է ամեն օր. ցանքերը կանօնաւորվում են: Այս տարի ծառերի պտուղները անասելի շատ են: Հացի դինը չէ բարձրանում: Պէտք է ասած, գիւղացին անձրևից յետոյ ուրախ է և եթէ աշտը հնձէ արտերը, կարող է մի տարի աղատ չունէլ քաղել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Վան, ապրիլի 26-ին Քանի մը օր առաջ տեղւոյս հայ-կաթօրկայ առաջնորդարան հասած հեռագիր մը Աղաբեան պատրիարքին մասը կը ծանուցանէր, որ խօսակցութիւններու և զանազան կարծիքներու առիթ եղած է քաղաքի «Ինտելիգենտ» դասակարգին մէջ: Արդէն, անցեալին մէջ, «Մշակ» Կոստանայայի թղթակիցը խիստ շահեկան և կարևոր տեղեկութիւններ տուած է ընկերացիներուն՝ հայ-կաթօրկ աղգայիններու վարչական և ներքին կազմակերպութեան նկատմամբ, որով աւելորդ կը սեպմ ալ մասերուն յիշատակութիւնը անգամ միւս ալ բերել: Սակայն աւելորդ չըլլար կարծեմ մէկ երկու տեղեկութիւններ և կարծիքներ յայտնել, որոնք իրենց շահեկանութիւնն ունեն հայութեան ընդհանուր գործերով զբաղողներուն համար—առանց դաւանանքի խտրութեան:

Աղաբեան պատրիարքը հասունեան և հակահասունեան խնդիրներուն մէջ չափին աւելի եփված ըլլալով, պատրիարքական աթոռը բազմեցնել վերջ յաջողեցաւ: Տալի հակառակ կողմը և երկու կուսակցութիւններն ի մի ձուլել: Իր չափազանց ուժեղ նկարագրով և յանձին իւր, կաթօրկիստութեան և պատրիարքութեան կրկնակի պաշտօններուն միացումով, այն տեսակ ճարտիկ քաղաքականութեան մը հետեւած էր, որով կրցած էր միապետական դրոշմաւոր վարչական գործերու ամբողջ շղթան և պատրիարքարանի ամբողջ ներքին երեմտական գործառնութիւնները իր ձեռքին մէջ պահել և ամեն գործի մէջ ըստ կամի շարժիլ: Կառավարութեան և դեպիստանայից հետ ունեցած յարաբերութեանց մէջ, իր դիւանագէտ, մէկ հատիկ մարզի էր: Աղգայնական անտակէտով որբան օր ունեցած էր թերի և ժամանակին համեմատ թրքաւոր համարված գործեր, անուրանալի է սակայն, օգտակար և լաւ գործերու յիշատակներ ալ կը թողու: Ու, այս տեսակ մէկը, բնականաբար, իր բարեկամներու շարքէն դուրս, պիտի ունենար թշնամիներ ալ, նոյն իսկ զինքը չըջապատող կրօնական կամ աշխարհական անձներն: Եւ ունի արդէն:

Իրաւանքը ըստում է. «Եւր երկու հայ, հոն երեք կուսակցութիւն: Փորձված ճշմարտութիւններէն է այս առաւն ալ, որու հիման վրա կենդանութեան օր, այժմ խիստ իրաւանցում մը կայ Կ. Պոլսոյ մէջ, հայ-կաթօրկ պատրիարքարանին շուրջը: Կրքերը՝ ուժեղ ձեռքի մը տակ մարած՝ այժմ բորբոքված են անոր մասովը, որ կուսակցական և անհնական հայրները ան-

պատճառ առաջ կը ըլլին ամենայն թափով: Հայ-կաթօրկ կղերի և վարչական մարմիններու վայելած գիտնական, զարգացած և ալ պատաւներ անունները, ըստ իս, պատճառ մը չեն կրնար ըլլալ հասարակական գործերու մէջ կուսակցական անհնական կրքերու լուսմին և հասարակաց զուտ օգտին գործելու անտակէտին բանի օր, ինչ ալ որ ըլլան, հայ անուն կը կրեն: Իցիւ թէ իմ այս յոռետես կարծիքներու մէջ սխալած ըլլայի, ու հայ-կաթօրկ ղեկավար մարմինները, կրօնական թէ աշխարհական, միասիրտ, միակամ ու խելացի կերպով գործելու կարողութիւնն մը ընէին՝ նպատաւոր ընտրութիւն մը կատարելով՝ միանգամայն ի նկատի ունենալով ժողովրդեան ներկայ վիճակը և հայ եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութեանց փափուկ կացութիւնը: Ուստի կը հարցնենք, արդեօր ո՞վ պիտի ըլլայ ապագայ պատրիարք կամ կաթօրկիւրը. ո՞վ է աւելի արժանաւորը, որ կարողանայ իրաւամբ յաջողիկ Աղաբեանին: Անհնապէս շատ ծանօթ չըլլալով հաւանական ընտրելիներու կարողութեանց, փափաղելի էր, որ մեր այս հարցման պատասխան մը տրվէր՝ իրազեկ անձի մը կողմէն:

Սո համամիտ չեմ յարգելի Գերուկի այն կարծիքին, թէ Օրմանեանի և Աղաբեանի յարաբերութիւններն ի Պոլիս և Աղադատեանի ու Զընդոյեանի տեսակցութիւններն ի Վան, մասնաւոր և գաղտնի նպատակ մը ունեն: Խնդիրն ինքնին պարզ է, քանի որ Վանի մէջ եղած երկու առաջնորդներու յարաբերութիւնները ծանուցվածին չափ ալ սիրալիք չեն եղած, և տեսակցութեանց արտաքին ձև երկուստեց կեղծ ըլլալը գաղտ, ներքնապէս ալ մայն տեսակ վարմունքներ մը տեղի կունենան, որուն իբր իրազեկ համոզված ենք, բայց գրելն աւելորդ կը համարենք:

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Frank. Zeit.» լրագիրը հաղորդում է, որ Քիւրբեան ամենամեծ ջանքեր է գործ դնում հարաւորութեան չափ իր ոյժերը մեծացնելու համար: Մայիսի 18-ին իրադէ հրատարակվեց, որով հրամայվում է 585 պահեստի բառաթիւներ կազմակերպել այն բոլոր մարդկանցից, որոնց կարելի է հաւաքել կայսրութեան մէջ և որոնք մինչև այժմ զինուորական ծառայութիւնից ազատ էին: Այդ իրադէով ջնջվում են և այն բոլոր արտօնութիւնները, որ վայելում էին մասնադական գանադան դասակարգները զինուորական ծառայութիւնից ազատ լինելու համար. բացի դրանից ջնջվում է և զինուորագրութիւնից ազատ լինելու այն արտօնութիւնը, որ վայելում էին Կ. Պոլսի, նրա շրջակայների, Մէկկայի և Բրուսա-յի մասնակցականները:

«Voltaire» լրագրում հրատարակված են այն պատասխանները, որ տուել է Գրեյֆուս քրէական դատարանի առաջարկած հարցերին: Լրագրի աւելով, այդ տեղեկութիւնները նա քաղել է վճռահինգ ատեանի արձանագրութեան գործի երկրորդ հատուրից: Այս այն հարցերը, որ առաջարկված են եղել Գրեյֆուսին, Ստատայի կողմից. 1) Նրան վերաբրվող խօսքերի առիթով, Վեա մեղաւոր չեմ. մինիստրին այդ յայտնի է. նա յայտնել է Պատի-դէ-Վլամին, որ ինձ յայտնէ: Նա գիտէ, որ եթէ ես յայտնեմ եմ մի որ և է դօկումենտ, նա ոչ մի նշանակութիւն չէ ունեցել, և ես այդ արեւ եմ միայն ներա համար, որ ստանաւ աւելի նշանաւոր դօկումենտներ: Սրեք տարուց յետոյ կը պարզվի իմ ամսեկութիւնը: 2) Պահապանների մէկի խօսքով, Գրեյֆուս որպէս թէ ասել է բանտապետին. «Ո՛հ հարկէ, ես մեղաւոր եմ, բայց մեռնակ ես չեմ, երկու-երեք տարուց յետոյ յայտնի կը լինեն և ուրիշները: Թէպէտ և բանտապետը հերքում է, որ Գրեյֆուս ասած լինի այդ խօսքերը: Այդ հարցերին Կայսնայայից հեռագրով ստացվեց հետեւեալ պատասխանը. Կայսնայ, 8 յունվարի 1899 թիւ: Արտուրված Գրեյֆուսին առաջարկված երկու հարցին նա պատասխանեց հետեւեալ. առաջին հարցին. Վեա չեմ արտասանել խօսքեր այն ձևով, ինչպէս որ հաղորդված է. ես ասել եմ մօտաւորապէս հետեւեալ. Վեա մեղաւոր չեմ: Մինիստրը գիտէ, որ ես մեղաւոր չեմ: Ամենին առաջ պէտք է գտնամ, որ մեղաւոր չեմ: Նա ուղարկեց ինձ մօտ Պատի-դէ-Վլամին, որ հարցնէ ինձանի, արդեօր ես չեմ յանձնել մի որ և է աննշան դօկումենտ, որպէս զի ստանաւ նրա փոխարէն աւելի նշանաւոր դօկումենտներ, և ես պատասխանեցի՝ ոչ, և թէ ես ցանկանում եմ, որ պարզվի գործը, և թէ չի անցնի երկու-երեք տարի ու մի անմեղութիւնս յայտնի կը դառնայ: Երկրորդ հարցին. Վեա չեմ արտասանել ինձ վերաբրված խօսքեր, որոնք բոլորովին անտեղի են: Սո ամեն տեղ ասել եմ, որ ես անմեղ եմ: Սո չը գիտեմ բանտի դիրքերումը ներկայ էր այն օրը ինձ չըջապատած մարդկանց լուսով, թէ չէ: Միւս հեռագրով, յունվարի 19-ից, հաղորդվում է. Գրեյֆուս պատասխանեց. «Թէ ոչինչ չէ կարող աւելացնել նրան, ինչ որ ասել է յունվարի 9-ին»:

«Polit. Corresp.» լրագրի Ալէնի թղթակիցը չէ հաւատում այն բանին, որ ռուսները ծրագրիր են ունեն երկաթուղու գծեր անցկացնելու Փոքր-Ասիայում: Մինչև որ, ասում է նա, կառուց-

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.